

ասում է Շահամիրեան — «ոչ ուտել, ոչ ըմպել, ոչ քնել, եթէ ոչ նախ եւ առաջ ընտրել օրէնս բարի» (93) եւ նրանց հնազանդեցնել «ընտելիւնս մեր շղթայիւ կապանօք անխախտելօք»:

Բայց որպէսզի օրէնքը լինի «բարի, արդար եւ անաչառ», պէտք է ընտրենք ամենաշարմարագոյն ժամանակը օրէնք դնելու համար, երբ «մեր հոգիները խաղաղ են ու մաքուր» եւ միմիանց նկատմամբ «ողորմած ենք ու գթած»: Մի կողմ պիտի չպրտենք անձնական ամէն մի շահ եւ նկատառում, պիտի ամուր փակենք մեր աչքերը, որպէսզի երբ օրէնք ենք դնում, չտեսնենք «ոչ հայր, ոչ որդի, ոչ մայր, ոչ քոյր, ոչ հարուստ եւ ոչ աղքատ, ոչ տէր եւ ոչ ծառայ, ոչ բարեկամ եւ ոչ թշնամի» (61):

Հեղինակը համաձայն չէ այն մարդկանց հետ, որոնք յոռետեսութեամբ բռնուած, ասում են, որ արդէն ուշ է եւ հայ ժողովրդին այլեւս փրկութիւն չկայ, որովհետեւ երկիրը հասել է ծայրայեղ անկման եւ ժողովուրդը յետին թշուառութեան մասնուած, ամբողջովին կլանուած է միայն մի հոգսով՝ իր քաղցը յազեցնելու եւ մերկութիւնը ծածկելու հոգսով: Այդպիսիներին նա պատասխանում է մի զեղեցիկ լաւատեսութեամբ հայ ազգի ապագայի նկատմամբ. «Այո՛ — ասում է նա — ես չեմ ուրանում իմ ազգի թշուառութիւնը, որ այսօր չափազանց ողբալի է, բայց բարեբախտաբար, դեռ եւս ոչ մերձ ի մահ եւ հոգեկարք: Ես յոյս ունեմ, որ իմ ազգը պիտի առողջանայ եւ երջանիկ կեանք ստանայ: Եւ այժմ, երբ արդէն մեր հիւանդութեան դեղը մենք գիտենք, հարկաւոր է, որ շտապով իմենք բժշկութեան բաժակը եւ բալասանի իւրը դնենք մեր վէրքին» (126): Իսկ բժշկութեան դեղն ու բալասանը օրէնքն է, հետեւապէս «հարկաւոր է, շատ հարկաւոր, որ ազատօրէն արիանանք եւ օրէնքի ու արդարութեան դօտին մէջքներս կապենք եւ ընտրենք մեզ համար բարի, քաղցրահամ, դիւրաճաչակ եւ անխախտելի օրէնքներ — ըստ կամաց եւ հաճութեան բոլոր հայ այր-մարդկանց՝ թէ՛ եկեղեցականների եւ թէ՛ հասարակ ժողովրդի» (49):

Շահամիրեանի կարծիքով՝ առանց օրէնքի չկայ ազատութիւն, չկայ երջանկութիւն, չկայ հանգստութիւն եւ ոչ ոքի համար — ոչ միայն

փոքրի, թոյլի, աղքատի համար, այլ եւ մեծի, զօրեղի եւ հարստի համար: Առանց օրէնքի չկայ խաղաղութիւն, եւ մարդը շարունակ, գիշեր-ցերեկ, երկիւղի ու վտանգի մէջ է: Հետեւաբար «աւելի լաւ է մեռնել ու գերեզմանի խորքն իջնել, քան թէ ապրել առանց օրէնքի, որովհետեւ առանց օրէնքի կեանքը աւելի տաժանելի է ու վատթար, քան դժոխքի պատիժը» (68):

ՏԱՐԱԿՈՒՄԱՆՔՆԵՐ

Այդպէս ուրեմն, Անկախութիւն, Հանրապետութիւն եւ Օրէնք, մանաւանդ Օրէնք — ահա՛ այն անկիւնաքարերը, որոնց վրայ — ըստ Շահամիրեանի — պէտք է կառուցուի հայ ժողովուրդի երջանկութիւնը:

Ժամանակի համար այդ գաղափարները նորութիւն էին եւ մի կատարեալ յեղափոխութիւն էին նշանակում:

Եւ մեր հեղինակը զգում է այդ: Նա նախատեսում է, թէ իր խիզախ մտքերը ո՛րպիսի յուզմունք պիտի առաջացնէին հայ ճահճացած մթնոլորտում: Նա նախազգում է, որ հակառակորդների բանակից արդէն պատրաստ են յարձակումներն իր դէմ եւ պատրաստ են գլխաւորապէս երկու ուղղութեամբ.—

Առաջին՝ եթէ այդ գաղափարները իրենց մէջ բովանդակում են ժողովուրդների երջանկութեան գաղտնիքը, հապա ինչո՞ւ լուսաւորուած Եւրոպան չի որդեգրում նրանց, ինչո՞ւ այնտեղ ապօրէն դրութիւնն ու ինքնակալ միապետութիւնները ոչ միայն չեն վերանում, այլ գնալով՝ աւելի են զօրանում:

Երկրորդ՝ մի ամբողջ ազգը ի՞նչպէս կարող է միասին թագաւորել, միասին հաւաքուել եւ օրէնք ու արդարութիւն անել. եւ եթէ կարողանայ էլ, բայց ո՞վ պիտի գործադրի նրա դրած օրէնքներն ու կարգադրութիւնները, ո՞վ պիտի հետեւի նրանց գործադրութեանը:

Կանխատեսելով այս առարկութիւնները, նա սկզբից եւ եթ աշխատում է ցրել լինելիք տարակուսանքները եւ իր մտքերն անխոցելի դարձնել: Նա մի տեսակ բանակուղի է մտնում իր հակառակորդների հետ, վիճարանում է եւ փորձում է նրանց ընդդիմախօսութիւնները ջրել:

Վիճարանութիւնների ժամանակ համոզե-